Ֆլազոն **500** մգ

Դեղաձև.Մոմիկներ հետտոցային:

Բաղադրություն. Յուրաքանչյուր հետտոցային մոմիկ պարունակում է Ակտիվ նյութ՝ մետրոնիդազոլ 500 մգ:
Օժանդակ նյութեր՝ պոլիէթիլեն գլիկոլ 1500 և 400:

Դեղաբանական խումբ. Հակապրոտոզոային դեղ:

Կիրառման ցուցումներ
Ֆլազոնը նախատեսված է որոշ հետտոցային վարակների տեղային բուժման համար՝
տրիխոմոնոային վագինիտ (*Trichomonas vaginitis)* և ոչ սպեցիֆիկ վագինիտ:

Հակացուցումներ
Ֆլազոնը հակացուցված է Մետրոնիդազոլի կամ այլ Նիտրոիմիդազոլի ածանցյալների նկատմամբ զերզգայունությամբ հիվանդներին:

Կիրառման ձև և դեղաչափում
Միայն մեծերի համար
-Տրիխոմոնոային վագինիտ (Trichomonas vaginitis) ՝ օրական մեկ հետտոցային մոմիկ, որը հարկավոր է խորը տեղադրել հետտոցի մեջ՝ 10 օր, ներբին ընդունման դեղաձևի հետ համատեղ:
- Ոչ սպեցիֆիկ վագինիտ՝ օրական մեկ հետտոցային մոմիկ, որը հարկավոր է խորը տեղադրել հետտոցի մեջ՝ 7 օր, անհրաժեշտության դեպքում ներբին ընդունման դեղաձևի հետ համատեղ:
Ձեր զուգընկերը պետք է զուգահեռ բուժվի, նույնիսկ եթե նրա մոտ չկան կլինիկական նշաններ:

Կողմնակի երևույթներ
Դադարեցրեք Ֆլազոնի օգտագործումը և անմիջապես դիմեք բժշկի:

1. Ալերգիկ ռեակցիաներ. Նշանները կարող են դրսևորվել ձեռքերի, ոտքերի, կոճերի, դեմքի, շուրթերի կամ կոկորդի այտուցով, որը կարող է կլման ակտի կամ շնչառության դժվարություններ առաջացնել, քոր, միանվագ ցան կամ եղջերացան:
2. Լուրջ, բայց շատ հազվադեպ կողմնակի ազդեցությունը գլխուղեղի հիվանդությունն է (էնցեֆալոպաթիա): Ախտանիշները տարբեր են, բայց կարող եք ունենալ ջերմություն, պարանոցի կոշտություն, գլխացավ կամ զգայախաբություն: Դուք կարող եք նաև ունենալ ցավեր մկաններում կամ հոդերում, թուլության զգացում արմունկներում կամ ծնկներում, խոսքի խանգարումներ կամ շփոթվածության զգացում:
3. Զարգանում է մաշկի ցան, ներառյալ Սթիվենս-Ջոնսոնի համախտանիշը կամ թունավոր էպիդերմալ նեկրոլիզը: Դրանք կարող են ի հայտ գալ որպես թիրախի նման կարմրավուն բծեր կամ շրջանաձև բծեր, որոնք

հաճախ դրսևորվում են մարմնի վրա բշտիկներով, մաշկի թեփոտումով, բերանի, կոկորդի, քթի, սեռական օրգանների և աչքերի խոցերով, որոնց կարող են նախորդել տենդը և գրիպի նման ախտանիշները: Դադարեցրեք Գլազոնի օգտագործումը, եթե ձեզ մոտ զարգանան այս ախտանիշները և անմիջապես դիմեք ձեր բժշկին կամ բժշկական օգնության:

4. Ձեր մոտ առաջանում է կարմիր թեփուկավոր ցան, որը տարածվում է մաշկի տակ բշտիկներով, որն ուղեկցվում է տենդով, բուժման սկզբում (սուր ընդհանրացված էկզանտեմատոզ պուստուլոզ): Դադարեցրեք Գլազոնի օգտագործումը, եթե ձեզ մոտ զարգանան այս ախտանիշները և անմիջապես դիմեք ձեր բժշկին կամ բժշկական օգնության:

5. Մաշկի և աչքերի դեղնացում. Սա կարող է պայմանավորված լինել լյարդի խնդրով (դեղնախտով):

6. Անսպասելի վարակներ, բերանի խոցեր, կապտուկներ, լնդերի արյունահոսություն կամ ուժեղ հոգնածություն: Սա կարող է պայմանավորված լինել արյան հետ կապված խնդիրներով:

7. Ստամոքսի ուժեղ ցավ, որը կարող է նույնիսկ հառագայթել մեջքին (պանկրեատիտ):

Նախազգուշացումներ

Գլազոն օգտագործելուց առաջ տեղեկացրեք բժշկին կամ դեղագետին, եթե՝

- ունեք կամ երբևէ ունեցել եք լյարդի հետ կապված խնդիրներ,
- անցնում եք երիկամների դիալիզ,
- ունեք հյարդային համակարգի ախտահարումներ:

Գլազոնը և ալկոհոլը

Գլազոնը ընդունելու ընթացքում պետք չէ օգտագործել խմիչք, ինչպես նաև դրանից հետո 48 ժամերի ընթացքում: Դա կարող է առաջացնել տհաճ կողմնակի բարդություններ, ինչպիսիք են սրտխառնոցը, փսխումը, ցավերը որովայնի շրջանում, առաջացնում է կարմրատակում և սրտի բաբախում, գլխացավ:

Հղիություն և կրծքով կերակրում

Կրծքի կաթի մեջ դեղի ներթափանցման պատճառով, այն խորհուրդ չի տրվում օգտագործել կրծքով կերակրման ժամանակ:

Հղիության և կրծքով կերակրման դեպքում բուժումը սկսելուց առաջ միշտ հարկավոր է խորհրդակցել բժշկի կամ դեղագետի հետ:

Թողարկման ձև

5 հեշտոցային մոմիկ ստրիպում, տուփ՝ 2-ական ստրիպով և բժշկական կիրառման հրահանգով:

Պիտանիության ժամկետ

3 տարի:

Չօգտագործել տուփի վրա նշված ժամկետից հետո:

Պահպանման պայմաններ

Պահել 25°C-ից ոչ բարձր պայմաններում:

Պահել երեխաներին անհասանելի տեղում:

Բացթողման կարգ

Դեղատոմսով: